ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 24 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1.Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը 11.02.2009թ. դիմել է սահմանադրական դատարան վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29-րդ և 38-րդ հոդվածների 2-րդ մասերով, 69-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին նախադասությամբ և 10-րդ մասով սահմանված դրույթների սահմանադրականության հարցը:

2.Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (ժդ) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Դիմողը նշում է, որ ՍԴ-ն 09.02.09թ. 2-րդ դատական կազմի որոշմամբ մերժել է իր դիմումի քննության ընդունելիության հարցը և դրանով իսկ խախտել է նրա ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով և Մի եվրոպական կոնվենցիայով սահմանված ողջամիտ ժամկետում արդարացի դատաքննության իրավունքը:

Դիմողի համոզմամբ կատարված խախտման հիմնական պատճառը իր նկատմամբ կիրառված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված և ՀՀ Սահմանադրությանը հակասող ՍԴ կանոնակարգն է:

4.«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասին 3-րդ պարբերության համաձայն .«Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական

դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով, որի ժդ) կետի համաձայն պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն ունեն. «դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով»:

Սահմանադրական դատարան հասցեագրված իր դիմումով քաղաքացի Ռ. Թորոսյանը բարձրացրել է օրենքի դրույթի սահմանադրականության հարց, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27 հոդվածով և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Չբավարարել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը և դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝